Թողարկում 15, Թիվ 4, Նոյեմբեր 2010

ԴԵՂԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի հաղորդաթերթ

Դեղերի կողմնակի և վնասակար ազդեցությունների դիտարկման բաժին

Այս համարում

1. *Ռոզիգլիտազոն*
2. *Կլոպիդոգրել և պրոտոնապոմպի արգելակիչներ*
3. *Սերոտոնինաբնույթ դեղեր*
4. *Լամոտրիջին*
5. *Պրեգաբալին*

Ռոզիգլիտազոն: Միրտանոթային հիվանդությունների զարգացման վտանգ:

Նոր Զելանդիա: Համաձայն Դեղերի անվտանգության գործակալության /Medsafe/ հաղորդագրության՝ միջազգային հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ռոզիգլիտազոն դեղով բուժվողներին սպառնում է սիրտանոթային ախտահարումների զարգացման վտանգը, ինչի կապակցությամբ բժիշկներին խորհուրդ է տրվում ուշադիր լինել և ամենայն խստությամբ հետևել այս դեղի հակացուցումներին, նախազգուշացումներին և մշտադիտարկման պահանջներին: Հաղորդագրության մեջ նշվում է, որ ռոզիգլիտազոնը խորհուրդ չի տրվում նշանակել՝

- սրտային անբավարարությամբ,
- սուր պսակային համախտանիշով կամ սրտի իշեմիկ հիվանդությամբ,
- ինսուլին ստացող հիվանդներին:

Ռոզիգլիտազոնով բուժվող հիվանդների շրջանում պետք է ուշադրություն դարձնել օրգանիզմում հեղուկականգի, քաշի ավելացման և սրտային անբավարարության տեսքով կողմնակի ազդեցություններին: Դեղի կիրառումը պետք է դադարեցնել սրտի ֆունկցիայի խանգարման դեպքում:

Prescriber Update, vol. 31 No 3, 2010

Կլոպիդոգրել և պրոտոնապոմպի արգելակիչներ: Նորացված տվյալներ:

Միացյալ Թագավորություն: Դեղերի կարգավորիչ գործակալությունը (MHRA) տարածել է հաղորդագրություն այն մասին, որ առկա են կլոպիդոգրելի և պրոտոնապոմպի արգելակիչների միաժամանակ կիրառման հետևանքով հնարավոր դեղային փոխազդեցության մասին նորացված տվյալներ:

Համաձայն հաղորդագրության՝ խորհուրդ չի տրվում միաժամանակ կիրառել կլոպիդոգրել և պրոտոնապոմպի արգելակիչներից՝ հատկապես օմեպրազոլ և/կամ էսոմեպրազոլ, քանի որ արդյունքում կարող է դիտվել կլոպիդոգրելի արդյունավետության թուլացման: Այն կարող է նպաստել թրոմբոզների, այդ թվում՝ սրտամկանի ինֆարկտի զարգացման վտանգի աճին:

Բժիշկներին խորհուրդ է տրվում՝

- Կլոպիդոգրել կիրառող հիվանդներին պրոտոնապոմպի արգելակիչներ նշանակելիս խուսափել օմեպրազոլից և էսոմեպրազոլից:
- Խուսափել կլոպիդոգրելի և CYP2C19 արգելակիչների միաժամանակյա կիրառումից, քանի որ կդիտվի միևնույն ազդեցությունը, ինչ՝ կլոպիդոգրելի և օմեպրազոլի կամ էսոմեպրազոլի միաժամանակյա կիրառումից (CYP2C19 արգելակիչներից են՝ ֆլուվոքսամինը, ֆլուոքսետինը, մոկլոբեմիդը, վորիկոնազոլը, ֆլուկոնազոլը, տիկլոպիդինը, ցիպրոֆլոքսացինը, ցիմետիդինը, կարբամազեպինը, օքսկարբազեպինը և քլորամֆենիկոլը):

WHO Pharmaceuticals Newsletter No 3, 2010

Սերոտոնինաբնույթ դեղերի կիրառումը հղիության ընթացքում: Կայուն թոքային գերճնշման վտանգ:

Միացյալ Թագավորություն: Դեղերի կարգավորիչ գործակալությունը (MHRA) տեղեկացնում է այն մասին, որ համաճարակաբանական տվյալները վեր են հանել հղիության ընթացքում սերոտոնինի հետզավթման ընտրողական արգելակիչների (մասնավորապես ուշ շրջանում) կիրառումից նորածինների կայուն թոքային գերճնշման զարգացման վտանգի աճ: Նորածինների թոքային զարկերակի գերճնշման արդյունքում զարգանում է սուր թթվածնաքաղց: Բժիշկներին կոչ է արվում հետևել հղիության վերջին փուլում գտնվող

կանանց կողմից սերոտոնինի հետզավթման ընտրողական արգելակիչների և սերոտոնին-նոադրենալինի հետզավթման արգելակիչների կիրառմանը: Խորհուրդ է տրվում մանրամասն հետազոտել այն նորածիններին, որոնց մայրերը հղիության ընթացքում կիրառել են սերոտոնինի հետզավթման ընտրողական արգելակիչներ կամ սերոտոնին-նորադրենալինի հետզավթման արգելակիչներ՝ նորածինների կայուն թոքային գերճնշման ախտանիշների բացահայտման նպատակով:

WHO Pharmaceuticals Newsletter No 3, 2010

Լամոտրիջին: Ասեպտիկ մենինգիտի զարգացման վտանգ :

ԱՄՆ: Սննդի և դեղերի վարչությունից ստացել է տեղեկություն այն մասին, որ լամոտրիջին դեղի կիրառումից կարող է զարգանալ ասեպտիկ մենինգիտ: Լամոտրիջինը կիրառվում է 2 և ավելի տարեկան երեխաների էպիլեպսիայի և մեծահասակների երբևեռային խանգարումների բուժման նպատակով:
Մենինգիտի ախտանիշներից են գլխացավը, տենդը, պարանոցային մկանների կարկամությունը, սրտխառնոցը, փսխումը, ցանը և լուսազգայնությունը:
Համաձայն հաղորդագրության՝ 1994 թ-ի դեկտեմբերից մինչ 2009 թ.-ի նոյեմբերն ընկած ժամանակահատվածում գրանցվել է ասեպտիկ մենինգիտի զարգացման 40 դեպքի վերաբերիայ հաղորդագրություն:
Դեպքերի մեծամասնությունը վերացել է լամոտրիջինի կիրառումը դադարելուց հետո, իսկ 15 հիվանդի մոտ դեղի կրկնակի նշանակման ժամանակ դիտվել է կողմնակի ազդեցության կրկնում:
Ելնելով վերոնշյալից՝ բժիշկներին խորհուրդ է տրվում լամոտրիջին կիրառելիս մենինգիտի ախտանիշներ նկատելու դեպքում այդ հիվանդության զարգացման այլ պատճառների բացառման պարագայում դադարեցնել դեղի կիրառումը և իրականացնել համապատասխան բուժում:

WHO Pharmaceuticals Newsletter No 5, 2010

Պրեգաբալին: Ինքնասպանության մտահղացում և փորձ:

Կանադա: Կանադայի առողջապահության նախարարությունը բժիշկներին և հիվանդներին տեղեկացնում է այն մասին, որ պրեգաբալինի կիրառումից կարող է ծագել ինքնասպանություն գործելու մտահղացում և փորձ: Համաձայն հաղորդագրության՝ 2005թ-ի հուլիսից մինչև 2009 թ-ի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում գրանցվել է պրեգաբալինի կիրառմամբ պայմանավորված ինքնասպանության մտահղացման 16 և փորձի 1 դեպքի վերաբերյալ հաղորդագրություն:
Դեղաչափը փոքրացնելիս կամ դեղի կիրառումը դադարեցնելիս 16 դեպքից 7-ի ինքնասպանություն գործելու ցանկությունը վերացել է, 1-ինը կրկնվել է պրեգաբալինի կրկնակի նշանակման ժամանակ: Հաղորդագրության մեջ նշվում է նաև, որ տարաբնույթ քրոնիկական ցավերով տառապող հիվանդները գտնվում են դեպրեսիայի զարգացման վտանգի խմբում, ինչը կարող է հանգեցնել ինքնասպանություն գործելու մտահղացմանը կամ փորձին, հետևաբար նման հիվանդների կողմից պրեգաբալինի կիրառումը կարող է բերել պատճառահետևանքային կապի սխալ ընկալմանը:

WHO Pharmaceuticals Newsletter No 4, 2010

Հասցեն՝0001, ք. Երևան, Մոսկովյան 15/1
Հեռ.՝ (374 10) 58 40 20, 58 41 20
Ֆաքս՝ (374 10) 54 24 06
էլ-փոստ: naira@pharm.am
Web : http://www.pharm.am

Դուք կօգնեք հազարավոր հիվանդների, եթե տեղեկացնեք մեզ դեղի կասկածելի կողմնակի ազդեցությունների մասին :